Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Ծրագիր՝ «Ոռոգման Համակարգերի Արդիականացման Ծրագիր»

Պարզաբանման խնդրանք#1

Մրցութային փաստաթղթերի

«Աջակցման խմբի և ՀՏՋՀ «ՋՏԾԻՄ»-ի համար ավտոմեքենաների գնում (երկու լոտով)»
ԱՄՍ Փաթեթի No՝ ISMP/NCB/PG-22/003

Մրցույթի մասնակցի կողմից «Պարզաբանման հարցում» ներկայացնելու ամսաթիվը՝ 2023թ. օգոստոսի 25

Մրցույթի մասնակցի պարզաբանում/հարց	Գնորդի/Պատվիրատուի պատասխան
Հարց(եր) Հարգելի գործընկեր Խնդրում եմ տալ պարզաբանում հետևյալ պահանջի մասով. Նշված մրցույթի շրջանակներում մատակարարված ապրանքները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 71-Ն որոշմամբ հիշատակված Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին: Նշված պահանջներին համապասխանության փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել Մրցութային առաջարկի/հայտի հետ: Արդյոք մատակարարվող տրանսպորտային միջոցների 1 դեկտեմբերի 2022 թվականի ՀՀ Կառավարության N 1872-Ն որոշման պայմաններին բավարարելը կդիտարկվի ՄՄ ՏԿ 018/2011 տեխնիկական կանոնակարգին համարժեք:	**Պատասխան(ներ)** Հարգելի մասնակից, Ձեր կողմից մատնանշված ՀՀ Կառավարության N 1872-Ն որոշմամբ հաստատվել է ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունների անվավոր տրանսպորտային միջոցներ արտադրողների պաշտոնական ներկայացուցիչների կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող (ներմուծված), Հայաստանի Հանրապետությունում արտադրված, Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ դրվող M1, M1G կատեգորիաների անվավոր տրանսպորտային միջոցներին ներկայացվող պահանջները և դրանց համապատասխանության գնահատման կանոնները, համաձայն որի համապատասխանության գնահատում անցած տրանսպորտային միջոցները պետք է համապատասխանեն «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին: Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ եթե Ձեր ընկերության

	կողմից ներկրված անվավոր տրանսպորտային միջոցները համապատասխանում են վերը նշված ակտերով սահմանված պահանջներին և առկա է այդ փաստը հավաստող՝ իրավական ակտերով սահմանված ձևի ապացույցը, ապա դա կդիտվի համարժեք, ըստ այդմ՝ սույն դեպքում անհրաժեշտ է ներկայացնել վերջնանշված տեսակի փաստաթուղթը/փաստաթղթերը: